Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի կազմակերպման և անցկացման մասին

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունը հայտարարում է մրցույթ Ընկերության 2015 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել այն ընկերությունները, որոնք համապատասխանում են ՀՀ ԿԲ 4/09 կանոնակարգի գլուխ 2-ի մեջ նշված չափանիշներին (ընդ որում, մրցույթում նախապատվությունը կտրվի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական ընկերություններին):

Մրցույթի մասնակիցները պետք է նաև ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը.

ա) աուդիտի ընդգրկման բնագավառները,

բ) աուդիտն իրականացնող խմբի անդամների աշխատանքային փորձն ու որակավորումը

գ) աուդիտի անցկացման ժամկետներն առաջին այցելությունից մինչև վերջնական եզրակացության տրամադրումը,

դ) աուդիտի իրականացման ընդհանուր գինը ներառյալ հարկերը և այլ ծախսերը

Մրցույթով հաղթող ճանաչված ընկերությունը պարտավորվելու է «Աուդիտորական եզրակացություն» և «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթերը տրամադրել Ընկերությանը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ոչ ուշ, քան 2016 թվականի ապրիլի 1-ը:

Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ և միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

Մրցութային առաջարկները բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ պետք է ներկայացվեն Ընկերությանը ոչ ուշ, քան 2015 թվականի մարտի 24-ը, երկու կնքված ծրարներով:

Մրցույթի հաղթողը որոշվում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել.

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, ԼՂՀ ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25 ա

հեռ. (0479) 94-28-58 e-mail: artsakhhek@mail.ru